

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի ղեկավարի 2013թվականին տարեկան կատարած աշխատանքների

2014թվականի հունվարի 13-ին ժամը 12<sup>00</sup>-ին Վարդանաշենի ակումբի շենքում տեղի ունեցավ Վարդանաշեն համայնքի ղեկավար Արթուր Մանուկյանի 2012թվականին կատարած

աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը համայնքի ավագանու և համայնքի բնակչության առաջ:

Ներկա էր Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական սոցիալտնտեսական զարգացման վարչության պետ՝ Վ. Սկրոչյանը:

Ներկա էին ավագանու երեք անդամները և համայնքի 58 /եփսոմոթ / անդամներ:

2013 թվականի ընթացքում Վարդանաշենի գյուղապետարան է մուտքագրվել 140 գրություն, իսկ դուրս է եկել 91 գրություն:

Համայնքի ղեկավարի մոտ կատարվել է 32 /երեսուներկու / քաղաքացիների ընդունելություն:

Գյուղապետարան մուտք է եղել 28 քաղաքացիների դիմումներ, որոնց բոլորին էլ պատասխանվել է:

2013 թվականի ընթացքում կայացել է ավագանու 8 նիստ, որոնց ընթացքում կայացվել է 21 որոշում:

2013 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 31 որոշում և արձակվել է 21 կարգադրություն:

2013 թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքի 2013 թվականի բյուջեով նախատեսվել է եկամուտներ 3805,0 հազ. դրամ, ծախսեր 20316,4 հազ. դրամ:

Ասեմ, որ 2013 թվականին բյուջեյով նախատեսված հողի հարկի 5970,0 հազ. դրամից հավաքագրվել է 4887,2 հազ. դրամ, որը կազմում է 81%, գույքահարկի 650,0 հազ. դրամից հավաքագրվել է 640,5 հազ. դրամ, որը կազմում է 98,0%, վարձավճարների 450,0 հազ. դրամից հավաքագրվել է 450,5 հազ. դրամ, որը կազմում է 100%: Գոտացիայի 14050,1 հազ. դրամից տրվել է 14050,1 հազ. դրամ, որը կազմում է 100%:

Ընդհանուր առմամբ համայնքի վարչական բյուջեով 2013թվականին նախատեսված 22450,1 հազ. դրամից հավաքագրվել է 19345,0 հազ. դրամ 86%:

2013թվականին հողի օտարումից նախատեսվել է մուտքագրել 15600,0 հազ. դրամ,

2013թվականի ծախսային մասով 38449,5հազ. դրամ, ծախսվել է 19071,4 հազ. դրամ, որը կազմում է 50%:

Ըստ հոդվածների կատարվել են հետևյալ ծախսերը՝

Աշխատավարձ 12500,3 հազ. դրամ, սոց օգնություն անապահով ընտանիքներին 1600,0 հազ. դրամ , էլեկտրաէներգիայի վարձ գյուղապետարանի 388,7 հազ. դրամ,

էլեկտրաէներգիայի վարձ խմելաջրի 800,0 հազ. դրամ, ըռոզման ջրի խորքային հորերի վերականգնման համար 400,0 հազ. դրամ :

2013 թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքի 7 բնակիչներ գորակոչվեցին Հայկական բանակ, իսկ 12 քաղաքացիներ մասնակցել են 2013թ-ի աշնանն անցկացված զորավարություններին:

2013 թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքում շինարարության (քանդման) թույլտվություններ չեն տրվել:

2013 թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքի շուրջ 2000մ<sup>2</sup> տարածքի վրա կատարվել է կանաչապատման աշխատանքներ, տնկվել է 300 հատ դեկորատիվ ծառեր:

2013 թվականի ընթացքում համայնքում կատարվել է կանոնավոր աղբահանություն:

2013 թվականին Վարդանաշեն համայնքի Վարչական տարածքի 952,0 հա. հողատարածքից 509,0 հա-ը ռոռոզման տակ է եղել, որից սեփականաշնորհված է 394,0 հա մասնավորին է, 56,2 հա.-ը վարձակալական:

2013թվականի Վարդանաշեն համայնքում 62,5 հա-ը ցորենի ցանքի և 1358,0հա-ը բոստան

բանջարանոցային կուլտուրաների տակ է եղել: Հիմնականում համայնքի հողօգտագործողները մշակված կուլտուրաներից ստացված արտադրանքից գոհ են մնացել :

2013 թվականի ընթացքում համայնքի գյուղապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության, պահանջների պահպանման նկատմամբ, ասեմ, որ ապօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:

2013 թվականի ընթացքում հասարակական տրանսպորտի աշխատանքները՝ Երևան քաղաքի հետ և Արմավիր քաղաքի հետ կապող տրանսպորտային միջոցները աշխատել են նորմալ ռեժիմով:

2013 թվականին համայնքի դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման մեծածավալ աշխատանքներ են տարվել:

Վարդանաշեն համայնքում 2013 թվականին գործարկվել է չորսառևորի օբյեկտ և մեկ զազալցակայան , որոնց կողմից վճարվել է սահմանված տեղական տուրքերը:

Վարդանաշեն համայնքում կա մեկ միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում են 163 աշակերտներ, համայնքում գործում է նախակրթարան որտեղ հաճախում են 29 երեխաներ: 2013 թվականին

Վարդանաշենի ակումբի շենքում գործում է սպորտային / բոնգրամարտի / խմբակ:

2013թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքում անցկացվել են շաբաթօրյակներ և կանաչ գոտիների ավելացումները:

2013 թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքում կա 92 թոշակառու և 25 նպաստառու:

2013թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքի 12 քաղաքացիներ գրանցվել են գործազրկության կենտրոնում և ստացել են գործազրկության նպաստներ:

2013 թվականին Վարդանաշեն համայնքի գյուղապետարանը համայնքի ոռոգման ցանցի շահագործման և խորքային հորերի վերանորոգման համար տրամադրել է 1,5մլն. դրամ:

2013 թվականի ընթացքում համայնքում կազմակերպվել և անցկացվել են անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխման և ազրարային այլ կանոնների պահպանման աշխատանքները:

Հարգելի համագյուղացիներ ես անձամբ իմ ուժերը ներ եմ դնելու համայնքի ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի միջոցով կատարելու ամեն հնարավորը, որպեսզի բարելավենք մեր համայնքի բնակիչների սոցիալ տնտեսական վիճակը:

### Բարձրացված հարցեր

Բաքաջանյան Սուրիկ

1. հարց՝ Վարդանաշեն համայնքի դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում:  
Հովհաննիսյան Կարեն
2. հարց՝ Վարդանաշեն համայնքում խորքային երկու հորերի վերանորոգում:  
Հովհաննիսյան Վարդ
3. հարց՝ Վարդանաշեն համայնքի խմելաջրի ցանցի վերանորոգում:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

/ Ա. ՍԱՆՈՒԿՅԱՆ /